№ 133 Յուլիսի 22 (Օգոստոսի 3) 1881 Յուլիսի 22 (Օգոստոսի 3) № 133

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Ոտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
*Тифлисъ. Редакція «Մշակ»*

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

## „ՄՇԱԿ"

ԼՐԱԳՐԻՆ ԿԱՐԵԼԻ Է ԳՐՎԵԼ

ԿԷՍ ՏԱՐՈՎ

*Այսինքն յուլիսի 1-ից ներկայ 1881 թուի, մինչև յունվարի 1-ը 1882 թուի։*

*Բաժանորդութեան գինը 6 ռուբլ է։ Գրվելու համար պէտք է ուղղակի դիմել խմբագրութեանը հետևեալ հասցէով. Тифлисъ, редакція „Мшакъ"*

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Ցխինվալից։ Նամակ Հին-Նախիջևանից։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Բոլգարիա։ Իտալիա։ Աւստրո-Ունգարիա։ Ֆրանսիա։ Նամակ Աւստրիայից։—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Նամակ խմբագրին։

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՆԱՄԱԿ ՑԽԻՆՎԱԼԻՑ

—

Յուլիսի 15-ին

Որքան եւրոպական հրէաները այլասատում են ամենայն գործում՝ թէ ուսման, թէ արհեստների ու գեղարուեստների մէջ առաջ գնալ,—հակառակ սորա, մեր Վրաստանի հրէաները, չը նայելով, որ նոքա Ռուսաստանի հովանաւորութեան ներքոյ, ունենալով մարդկային բոլոր իրաւունքները, դարձեալ խմորված են հին հրէական հնամոլութեան մէջ, հակառակ են ամենայն նորութեան և մեծ խոչնդոտ են կազմում ուսման և գիտութեան տարածվելուն։—

Մեր հրէաներին որքան էլ ցանկանանք հասկացնել, որ ուսումնարանը մի օգտակար հիմնարկութիւն է հասարակութեան համար, ինչքան ապացոյցներ և իրողութիւններ ներկայացնենք նոցա, այնու ամենայնիւ, նրանք յամառութեամբ պնդում են, որ Աստուածաշունչ գրքից դուրս՝ ոչ մի ուսում չը կայ։ Այսպէս երբ մեր հասարակութեան մէջ սկսում ենք մի ընդհանուր օգտակար գործ արծարծել և ձեռնարկել և ժողով ենք կազմում նոյն գործի իրագործելու վերաբերութեամբ, հրէաները մեր գիւղի մէջ լինելով շատ թուով երկու ազգութիւններից՝ հայերից և վրացիներից,—գործը միշտ խեղդվում է հրէաների ձայների բազմութեամբ, քանի որ վերջին երկու ազգարնակութեան ձայները համեմատաբար թուով աննշան են և այդպիսով ոչ մի գործ առաջ չէ գնում։

Խախամները, հրէաների հոգևոր գլուխները, որոնց ձեռքն է Ցխինվալի հրէաների ղեկը ինչպէս կատարող և ուսուցիչ Աստուծոյ բոլոր պատուէրների, լինելով վերին աստիճանի տգէտ, իրանց ծուռ վարդապետութեամբ Ցխինվալի բոլոր հրէաներին քարողում են այս խօսքերով՝ «եթէ իրանց որդկերանց կը տան հասարակաց ուսումնարանը, նոքա անհաւատ կը դառնան և թէ Աստուածաշունչի մէջ կան դեռ ևս այնքան բազմատեսակ ուսանելիք, որ եթէ մարդս հարիւր տարի ապրի, չէ կարող բոլորը ուսումնասիրել և թէ՝ կրօնը իրանց արգելում է ուրիշ բան ուսումնասիրելուց։ Այսպէս պահում են իրանց ժողովրդականներին խորին տգիտութեան մէջ և բոլոր ջանքը գործ են դնում քանդել ուսումնարանի պէս օգտակար հիմնարկութիւնները, չը նայելով, որ մեր տէրութիւնը տուել է իր հովանաւորութեան տակ եղող ազգերին կրօնի և համոզմունքի ազատութիւնը, և ամենայն ուսումնարանի մէջ թոյլ է տալիս ամենայն դաւանութեան մանուկների համար ունենալ իրանց կրօնուսոյցը։

Ցխինվալում շատ անգամ արծարծվել է տէրութեան կողմից ուսումնարանի բացման խնդիրը և շատ պաշտօնեաներ եկել են այս գործով, բայց նա չունեցաւ յաջողութիւն։ Վերջը, եթէ չեմ սխալվում, եօթ տարի առաջ Թիֆլիսի հանգուցեալ Նահանգապետ Օրլովսկին նոյն նահանգի դպրոցների դերեկտոր Սարելեցկու հետ գալով Ցխինվալ, մեծ աշխատանքով և սպառնալիքներով համոզեցին հրէաներին ուսումնարանի բացման հարկաւորութիւնը։ դրանից յետոյ իւրաքանչիւր տուն պարտաւորվեցաւ կայացած վճռով տարեկան մի ռուբլի Դօրու գանձարանը մտցնել Ցխինվալի ուսումնարանը պահպանելու համար։

Ներկայ 1881 տարվայ 15-ին յունվարի, թոյլտուութեամբ Նորին Կայսերական Բարձրութեան Կովկասեան փոխարքայի, բացվեց Ցխինվալում երկու դասատնից բաղկացած տարրական ուսումնարան (Двухъ классное нормальное училище), որ իր կարճառօտ գոյութեամբ մեզ անսպասելի յառաջադիմութիւն ցոյց տուեց և չենք կարող մեր խորին շնորհակալութիւնը չը յայտնել վերատեսուչ պ. Զափարիձէին և ուսուցիչ Խիմչիեվին։

Զը նայելով այն մեծ դժուարութիւններին, որ տէրութիւնը կրեց Ցխինվալի մէջ ուսումնարան բանալու ժամանակ շնորհիւ տեղիս հրէաների, ներկայ ժամանակ, ամենայն ջանք գործ են դընում, որ փակեն բացված ուսումնարանը հետևեալ միջոցներով. չեն ուզում մասնակցել ուսումնարանի տեղի գնելու և շինութեան ծախսերի մէջ, գանգատներ են տալիս Դօրու գաւառի դատաստանատներում նոյն գաւառի գանձարանում վեց տարվայ միջոցում մտցրած մի մի ռուբլ յետ ստանալու համար....

Ահա, այսպիսի հնամոլ ժողովրդից որքան վնասներ պէտք է կրէ մեր խեղճ հասարակութիւնը։ Իրանք խաւարի մէջ մնալով, մեր խեղճ մանուկներին կամենում են սպանել մտաւորապէս և զլորել տգիտութեան անդունդը։ Եւ այսպիսով ոչ հայերը, ոչ վրացիները, ոչ էլ տէրութեան օրգանները մինչև այժմ ոչինչ ներգործութիւն չը կարողացան ունենալ այդ կոյր և հնամոլ հրէաների վրա։

Բ. քահ. Տէր-Աբրահամեանց

### ՆԱՄԱԿ ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ

—

Յուլիսի 10-ին

Նախիջևան գաւառում թուրք և հայ գիւղերից ամենահռչակաւորը իր քաջութեամբ և զէնք բանացնելու սովորութեամբ Աղնաբերդ հայ գիւղն է։ Այդ գիւղի հայերը սովորութիւն ունեն ըսկսած 7—8 տարեկան հասակից մինչև խոր ծերութիւնը զէնքերի հետ զանազան վարժութիւններ անել, իսկ կիրակի կամ հանդիսաւոր օրերը, փոխանակ շաբաթվայ ծանր գիւղական աշխատանքներից հանգստանալու, պարապում են որսորդութեամբ։

Յուլիսի 5-ին այդ գիւղի չորս մարդիկ, վերառնելով իրանց հրացանները և որսորդութեան միւս պարագայքը, գնում են կաքաւ որսալու։ Երբ նրանք բարձրանում են սարերի գագաթի վրա, տեսնում են Զալխան անուանեալ ձորի մէջ մի քանի մարդիկ վեր ընկած, ուղտերով, ձիերով, եզներով, ոչխարներով, բեռներով. սրանց մօտ, ինչպէս պահապաններ կանգնած են լինում քանի մի զինաւորված ձիաւորներ։ Մեր չորս աղնաբերդցիները փոքր ինչ մօտենալով համոզվում են որ այդ ձիաւորները՝ աւազակներ են։ Կողոպտվածներին ազատելու համար, որոնք ընկած են կապած ձեռներով և ոտներով, որսորդներից մինը վազում է գիւղը և բերում է իր հետ լաւ զինաւորված 150 մարդ գիւղացիներից։ Աւազակները լինում են 40 մարդ, վերջին սիստեմայի հրացաններով զինաւորված։ Այդտեղ սկսում է սարսափելի կռիւ ազնաբերդցի հայ գիւղացիների և քիւրդ աւազակների մէջ։ Գիւղացիները յետ են մղում քիւրդերին մինչև Սուստ գիւղը։ Աւազակների մի քանիսը սպանվում են և չատերը վիրաւորվում են, մանաւանդ յայտնվում է իր քաջութեամբ ազնաբերդցի Կարապետ Ստեփանեան։ Կռիւը չարունակվելով մինչև արեգակի մայր մտնելը, քիւրդերը թողնում են իրանց աւարը և տանելով իրանց հետ միմիայն կողոպտված ձիերը և փողը, անցնում են Արաքսի այն կողմը, Պարսկաստանի Մաքու խանութեան հողի վրա։

Անցքի միւս օրը պ. գաւառապետը իր պահապան ձիաւորներով ճանապարհ է ընկնում աւազակներին գտնելու համար։

Առհասարակ ցանկալի է, որ Արաքսի ափերում աւելի արթուն հսկողութիւն լինէր քիւրդ աւազակների վերաբերութեամբ։ Լուր է տարածվել որ Սուստ գիւղի ռուսահպատակ քիւրդերը, որոնք վերջին պատերազմից առաջ փախել էին Թիւրքիա, հիմա գտնվում են Պարսկաստանի Մաքուի հողի վրա և կազմած ունենալով աւազակների ահագին խմբեր, անդադար անցնում են ռուսաց սահմաններ ու կողոպտում մեր գիւղերը։ Այդպիսով աւազակութիւններ, գողութիւններ, կողոպտութիւններ անպակաս են այժմ։ Շարուր-Դարալագեազ գաւառում յիշեալ Մաքուի քիւրդերը և Սուստ գիւղից փախածները լի են. օր չէ անցնում որ չը պատահի մարդասպանութիւն, գողութիւն կամ կողոպտում։ Օր ցերեկով քիւրդերը գութանի տակից եզ կամ գոմից են խլում և փախցնում Պարսկաստան. Բաշ-Նորաշէն գիւղի կայարանից Նորերումս վեց ձի են տարել քիւրդերը դիշեր ժամանակ։

Գաւառապետը իր կազակներով և գաւառական պահապան ձիաւորներով ոչինչ չէ կարող անել։

* * *

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 18 յուլիսի

«Խելքից պատուհաս» կոմեդիան թարգմանելուց և ներկայացնելուց յետոյ՝ թատրոնի կառավարիչ իշխան Ամատունին ինձ մասնաւորապէս առաջարկում է թարգմանել Գոգոլի նշանաւոր կոմեդիան՝ «Ревизоръ»-ը։ Քաջալերված նրա յայտնած ցանկութիւնից՝ թէ այսպէս և թէ այնպէս ամբողջ չորս ամիս ճակատի քրտինք թափելով՝ վերջացնում եմ յիշեալ թարգմանութիւնը։

Անցած մայիսի 15-ին թարգմանութիւնը ձեռքումս գնում եմ իշխան Ամատունու մօտ։ Իմ առաջարկութեանս, որ նա վերցնէ աշխատութիւնս և վարձատրէ՝ խոստանալով և ուրիշ պիեսաներ էլ թարգմանել հայ բեմի համար՝ իշխանը իմ թարգմանութիւնս վերցնում ուղարկում է նոր ընտրած թատրոնական մասնաժողովի քննութեան, որի անդամներն են պ. Գ. Սունդուկեանցը, պ. Ս. Արծրունին և պ. Ա. Յովհաննիսեանը։

Անցնում է մի շաբաթ. գնում եմ պ. Ամատունու մօտ մասնաժողովի կայացրած վճիռը իմանալու համար։ Նա ինձ ասում է, որ «դեռ չէ ստացել նրանց եզրակացութիւնները, եկէք վաղը, միւս օրը, և եթէ տեսնելու լինիք մասնաժողովի անդամներին՝ ստիպեցէք նրանց որ ըսկսեն թարգմանութեան քննութիւնը»։ Այս հանգամանքը զարմացրեց ինձ, որ հէնց ես պէտք է նրանց ստիպէի թատրոնական գործի համար թարգմանութեան քննութիւնը սկսելու։ Իւրաքանչիւր օր կօշիկներ մաշելով, անդադար լսելով թատրոնի կառավարչի ծառայի «տանը չէն, քընած են, հագնվում են, լուացվում են կամ վաղը, միւս օրը եկէք» խօսքերը՝ ես վերջապէս 15 շրից բաղդ եմ ունենում տեսնել իշխան Ամատունուն և լսել նրանից, որ թարգմանութիւնը պ. Ս. Արծրունու մօտն է։ Ս. Արծրունուց իմանում եմ, որ դեռ չէ ստացել ինքը, այլ սպասում է նրան, որ շուտով իր կարծիքը յայտնէ, ի նկատի ունենալով, որ շուտով պիտի մեկնի Թիֆլիսից, այլ թէ թարգմանութիւնը գտնվում է պ. Ա. Յովհաննիսեանի մօտ։ Երեկայիր, ընթերցող, որ արշաւանքներս պ. Ամատունու դրան չէմքից փոխադրվեցան պ. Ս. Արծրունու և փոխադարձ վարկի բանկայի մէջ տեղ։ Պարոն Ա. Յովհաննիսեանը ինձ յայտնում է, որ թարգմանութիւնը իր մօտն է, դեռ չէ կարդացել, այլ պիտի կարդայ։ Ես նրան պատասխանում եմ, որ երեք շաբաթից աւելի է իր մօտ ընկած է, էլ երբ պիտի կարդայ։ Նա ինձ խոստանում է նոյն օրը ուղարկել պ. Ս. Արծրունու մօտ։

Օրեր գլորվելով պ. Ս. Արծրունին հազիւ հազ ստանում է թարգմանութիւնը։ Ինչպէս նա ինձ վերջն ասում է, երեք օրից ուղարկել է թատրոնի կառավարչին իր գրաւոր եզրակացութիւնը, որ թարգմանութիւնը քննելով՝ գտնում է գեղեցիկ և մեր բեմին յարմար։ Սրանից յետոյ չատ մանդալով՝ վերջապէս կարողանում եմ տեսնել թատրոնի կառավարիչ իշխանին։

Իշխանը ինձ տեսնելով՝ հաղորդում է ինձ, որ Ս. Արծրունուց արդէն ստացել է եզրակացութիւն իմ օգտի համար, մնացել է հիմի պ. Գ. Սունդուկեանի կարծիքը, որից յետոյ ինձ կը վարձատրէ ինչպէս հարկն է։ Թարգմանութիւնը, ինչպէս երևեցաւ, ուղարկված էր նրան։

Միւս օրը կասկածելով, որ մի գուցէ ուղարկած չը լինեն պ. Սունդուկեանի քննութեան՝ գնում եմ ստուգելու։ Այնտեղ իմանում եմ, որ պ. Սունդուկեանը ամարանոց է գնացել. լսում եմ, որ վերադարձել է, բայց հիւանդ։ Այդ հիւանդութիւնը պատճառ է լինում, որ ես ամբողջ մի շաբաթ գնում գալիս եմ առանց նրան տեսնելու և թարգմանութեան ուղարկված լինելը ստուգելու, սակայն վերջապէս պ. Սունդուկեանը սակաւ ինչ կազդուրվում է և ինձ ընդունում։ Նա ուրախութեամբ իր անկողնի մէջ գրում է իշխան Ամատունու վերան իր եզրակացութիւնը, որ պիեսան յայտնի է իր պարունակութեամբ և թարգմանութիւնն էլ գեղեցիկ լինելով՝ գտնում է մեր բեմին յարմար։

Այս գրաւոր եզրակացութիւնը տանում եմ իշխանի տուն. բայց նրա միշտ գեղեցիկ տրամադրված ծառան ինձ յայտնում է՝ թէ իշխանը բարեհաճեց այս բոպէիս տանից դուրս գնալու։ Թարգմանութեան տետրակները և պ. Սունդուկեանի գրաւոր հաւանութիւնը թողնում եմ ծառային, որ իշխանին յանձնէ։

Բայց այս երկրորդ գրաւոր եզրակացութիւնից յետոյ իմ արգելքներս աւելի և աւելի շատանում են իշխանին տեսնելու, իսկ թէ ինչի համար—ահա պատմում։ Ընթերցողը պիտի շատ լաւ իմանայ, որ այս թատրոնական նորընտիր մասնաժողովը այնպիսի անդամներից կամ անձնաւորութիւններից է կազմած, որոնք իրանց յարաբերութիւններով իրարի աչքի լոյս են։ Այս այսպէս լինելով շատ բնական է, որ սրանց մէջ ոչինչ պաշտօնական բան չէ կարող լինել—թէ ընդհանուր ժողով. թէ խորհրդաժութիւն և թէ հաւաքական մի ինչ և իցէ բան, ինչպէս և էլ եղաւ, որովհետև միայն ես էի մէջտեղը այդ մասնաժողովի մեքենան լարողը, որ մի լինեն։ Բացի սրանից՝ այստեղ ընթերցողը պիտի նկատէ, որ մասնաժողովի մի երրորդ անդամը